

Մնբաս Բիւրաս  
 Կմբագրութիւն «Փիիւնիկ» Ի  
 Ալեքսանդրիա



S. Burat  
 Rédaction «PUNIG»  
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
 Լր. 45  
 Վ.ՅԱՄՄՍԵՍ 25  
 —  
 Բ Ա Յ Ն Ե Գ Ի Ի Ո  
 Կ Ա Ն Ն Ի Կ Է  
 Ձեռագիր ետ չ'դարձուի

# Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի Մէկ դրուս ողջի

Շ Ա Բ Ա Բ Ա Բ Ե Բ Թ

ԱՐՏԱՍՈՒՅՍՆ  
 Ձր. 15  
 Վ.ՅԱՄՄՍԵՍ 8  
 —  
 ԿՈՎԿԱՍ  
 ՏԱՐԵԿԱՆ ԲՎԼ. 6  
 Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

7 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ԹԻԻ 25

### ՎԵՂԱՐՍԱԽՈՐ ՀԱՍԱՌՈՒՆ ԵՒ ԸՆԿ.

«Ահա՛ ո՛չ միայն տեղիս հասարակուկութիւնը, այլ նաեւ մեր ազգային ամբողջութիւնը շահազրգոտ հարցումներ, որոնց պատասխանները յաջորդով պիտի տանք»:

Այս ասուածքով կը վերջացընէինք տեղիս երբեմնի տիրոջութեամբ քարոզիչ Վահրամ Վարդապետին վերաբերող յօդուածը, հրատարակուած նախորդ թիւին քրոնիկին մէջ:

Խոստացանք, կատարենք: Յայտարարենք նախ թէ՛ մենք ո՛րք ենք անձնական ինքիք ունեցած չ'ենք, չ'ունինք և չ'ենք ալ կրնար ունենալ մեր բարեշնորհ վարդապետին հետ. թէ՛ մամուլի անողոք ու անաչառ քննադատութիւն մը շատ օգտակար կը գըտնենք անձերու, արարքներու վրայ, որոնք ազգային, հանրային հանգամանք ունին:

Ապո՛ւշ բան է չըզբազըլ անձերով, երբ այդ անձերը հեղինակները

կ'ըլլան դէպքերու, որոնք մեծ կշիռ կունենան հաստատութեան մը, փոփոխութիւն մը, ազգի մը ճակատագրին վրայ:

Մովսէս մը, Յիսուս մը, Մուհամմէտ մը, Ներոն մը, Ատտիլա մը, Լէնկիթիմուր մը, Ալեքսանդր մը, Կեսար մը, Նաբոլէօն մը, Շէյքսպիր մը, Վոլթէն մը, Հիւկո մը, Էն, Էն, Էն. ահա՛ անուններ, ահա՛ անձեր, որոնց ամեն մէկը ներկայացուց տիեզերքը, երկինքը, երկիրը, մարդկութիւնը: Ու երբ այդ անձերով զբաղինք, գոած կ'ըլլանք տիեզերական պատմութիւնը:

Չըշեղինք սակայն մեր նիւթէն ու սկսինք տալ պատասխանները հետեւեալ հարցումներուն.

1. Ինչո՞վ շինեց այդ վեց յարկերը, որի՞ հաւար շինեց եւ որի՞ անունին դարձուց ան:
  - Եթէ սխալ չէ՛ իմացածնիս, 2000 էն աւելի ոսկիով շինեց այդ վեց յարկերը, իրին համար շինեց ու իր քրոջ անունին դարձուց:
2. Ինչո՞ւ տարիներով ստացաւ այդ անուակաւը:
  - Որովհետեւ իբրև քարոզիչ կամ

փոխանորդ ևն, կանչուած էր Երուսաղէմէն, թէ և օր մը չը լսուեցաւ քարոզելը. առաջնորդներ եկան գացին, տեղապահներ նստան, ելան, ու Վահրամ Ազարեան միշտ նոյնը մնաց. նոյն քարոզիչը, նոյն փոխանորդը, փառահեղ մօրուքովն ու պարթև հասակովը. պատկառելի ոչնչութիւն մը:

3. Ինչո՞ւ դադրեցուցին վճարումը. — Յովսէփ Եպիսկոպոս Այվազեանին կրկնակի թախանձանքին վրայ ինամակալութեան որոշումը յարգելու համար. Յիսալ է կարծել թէ այդ վճարումը դադրեցուցած ըլլան լոկ Վահրամ Վարդապետին պաշտօնին — եթէ ունէր — պէտքը չը տեսնուելուն համար: Ո՛չ, քանի՞ քանի պաշտօնեաներ տեսանք, որոնք ամսաթուշակ ստացան, ո՛չ որովհետև պաշտօն մ'ունէին, այլ որովհետև պէտք էր որ ապրէին:

4. Ինչո՞ւ իր գոյժերը դուրս հանուեցան:

— Որովհետև օրուան մեծագոյն մասը կ'անցընէր իր քրոջ տունը. կ'երևայ թէ Վահրամ Վարդապետին հանգըստութեան համար խորհուած է այդ միջոցը. Վարդապետ մը վանքը կը վայլէ, և, եթէ առաջնորդական ո՛ւ է պաշտօն մ'ունի, Առաջնորդարանին մէջ:

Իսկ Վահրամ Ազարեան Երուսաղէմի միաբան թէև, վանքէն հեռի, քրոջը տունը քաշուած, իրեն ու իրեններուն համար միայն ապրել կ'ուզէ:

— Ո՞ր արտփակութեանը կարճատև շնորհովը կը վաչկէ քառձրձ տեղի պաշտպանութիւն. ոչակի՞ ց' այդ պաշտպանութիւնն, ինչպէս իմացաւ 0009 յո ըստ վաւեր իշխման, 1871 ին էր Երուսաղէմի ժամօր ճեմարանի Ամեն Թեղք. Սուրբատեան Սրբազանը Տեսուչ էր. դեռ նոր Զեթուտէն անշակերտ շեքոնքովսն մանուկներ էինք, — կըրա-

սերագոյններուն դասարանը. օրին մէկը նիհար, դալկահար ու խոժոռ պատանի մը — չըսելու համար երիտասարդ մը — բերին, մեր քովը դրին. կէլիպօլուցի Սարգիս, վարժարանին ամենաժոյլ աշակէ՛րօր, ուսուցիչներուն յուսահատութիւնը. տարուէ տարի մէկ երկու կարգ դէպ ի ետ փոխոյ յաւիտենական ուսանողը. Եստ չ'անցաւ, հանուեցաւ մեր կարգէն ալ: Պէտք է ըսել թէ՛ մեր դասարանը ճեմարանին դրանը քովն էր: Կէլիպօլուցին անկից դուրս ելած էր միանգամ ընդ միշտ...

(Շարունակելի) (\*)

**ԳՐԶՆ ԶՔՕՍԱՆԵ**  
**Գ Ա Բ Օ**

Երևակայեցէք թոփլիկ ծառի մը պէս թոմպլիկ մէկը, տուէք անոր հաստ գլուխի մը հետ՝ կարծուկ ու-

(\*) Այս յօդուածը շարունակելի ընելով գոնէ մէկ շաբաթի կեսնք ալ շահած կ'ըլլա՛նք...: Ամսոյս Յին երեքշաբթի կէս օրէն ետքը ժամը 4ին աստեղները, անմասնօթ մը կը մօտենայ տղուս, Վաղիակ Բիւրատի, Փոքր Մէնչիչէյի փողոցին անկիւնը, կ'աղաարատ իրեն խօսիլ իր հօրը, յարգելի տալու Վահրամ Վարդապետ Ազարեանի վերաբերեալ հրատարակութեան շարունակութիւնը ներկայ թիւով. հախառակ պարագային, կը սպաննայ. «Հօհ դ'արիւնը և՛ պիտի քափեմ»: Վահրամապաշտ աղջիկն ալ, Նուրաց պարոնը յետոյ կ'երթայ ասուն, կ'ահարակէ կիսս, նոյն սպանալիքներով: Կը կարծուի թէ Վահրամ վարդապետի ծառայութեան մէջ ապրող մըն է բոլոր անծանօթը: Պիտի խնդրէինք որ աս յօդուածը վերջացընէինք յաջորդ թիւով՝ ու՛ անուշ հետեւ հաճէր ձեռնարկել իր ծրագրին դարձադրութեանը:

Իսկ Վահրամ վարդապետը, հրապարակաւ պարտաւոր ենք յայտարարել, պատասխանատու կը բռնենք ո՛ր է դէպքը, որ այսուհետև կրնայ տեղի ունենալ անսնունքով. յայտարարել մնաց չ'էր:

քեր, մանր, ճտիկ աչքերով և լայնչի  
երկու ականջներով ամբողջացուցէք  
գլխին երկու կարևոր մասերը, ու ձեր  
առջև պպզած պիտի տեսնէք Գրչիս  
գաճաճը, Գարօն:

Թրքական հին առած մը կ'զգու-  
շացնէ մարդիկ՝ հասակով շատ կարճ  
արարածներէն:

Բայց մի՛ վարմանաք եթէ Գարօ  
յաջողի ջրեւ պահ մը իր մասին, գրե-  
թէ բոլոր իրենպէսներուն համար ար-  
տայտուած կարծիքը:

Ժամանակին այդ դատակնիքը  
Պօտուրին ճակտին փակցընող Թուրքը՝  
ապահովապէս՝ «Գարօ»ին պէս մէկու  
մը կը պարտի իր այդ արձակած վը-  
ճիւղը, այսօր առածի կարգ անցած:

Ինչպէս որ դուք դեռ յիշճալ ա-  
ռածին բացարձակ ճշմարտութեանը  
վստահիլ չ'պիտի ուղէիք, գոնէ Գա-  
րօին համար, վայրկեան մը, տակա-  
ւին զինք չ'ճանչցած, այնպէս ալ շատ  
հաւանական է որ պօտուրը — Գարօի  
նմանները մանաւանդ — անմահացնու-  
ղը ինքն ալ յաճախ չէ ուզած հաւա-  
տալ բանի մը, որուն իրմէ վերջը հա-  
ւատացնել պիտի տար, գոնէ, իրեն  
լեզուէն հասկըցող, բմբռնող բոլոր  
մարդոց: Այնքան ճապուկ է նա որ-  
քան օձ մը:

Ինք ցած, հասակէն շատ աւելի  
ցած միջոցներու կը դիմէ նա, անգամ  
մը որ բարկանայ, «քէլը կարմրի», ինչ-  
պէս կ'ըսեն: Շրջանակ մը ունի Գարօ,  
— high life շրջանակ մը — ուր ամեն  
ատեն, ամենայն դիւրութեամբ կը մըտ-  
նէ, կ'երէնէ, Professionները, զորս ու-  
նի, և կեղծարարութիւնը տուած են  
իրեն sans façon ըլլալու monopole:

Ասով չ'վերջանար:

Ամուսնացած, զուակներու տէր  
մարդ է Գարօ, բայց աշխարհիկ ու  
սզատամիտ: Կուզէ ազատ սպրիլ, հե-  
ռու հոգերէ և մտածումներէ. ըլլալ  
ազատ և մէկ կնոջ հետ կապուել մընա-

լէ: Պիտի հաւատաք, ուրեմն, երբ ձեզի  
ըսեմ որ ազատ օր մը, ազատ երկրի  
մը մէջ, իբրև ամուրի ազատ մարդ՝  
ձեռքը կուզէ Գարօ աղջկան մը, որը  
խաբած էր իժի մը պէս, առանց խըղ-  
ճահարուելու:

Մեր Գաճաճը դիւրաւ գոյնը դուրս  
չ'տար սակայն: Տասնեակ և աւելի  
տարիներով վարած գործին շնորհիւ,  
շատ մը մարդոց հետ ժանօթութիւն  
ունեցած է: Հաշտ է նա ամեն մար-  
դու հետ. մէկուն խօսք մը, միւսին  
ժպիտ մը այն ժպիտներէն որու՝ լեզ-  
ուին պէս թօթով, կեղծ ըլլալը ձեզմէ  
աղէկ դիտէ ինք:

Եթէ այս masse de chair ին մէջ  
դնէք սև հոգի մը, անուղիղ սիրտ մը  
խարդախութեամբ համեմուած, պիտի  
ունենաք Գարօի արտաքին type ին  
հետ և ներքին մարդը, որուն գոյու-  
թեանը դուք ալ հետս՝ չ'պիտի տարա-  
կուսէիք, թէ որ ճանչցած ըլլայիք  
զայն: (\*)

Վ. Վ. ՇԱՄԼԵԱՆ

## Ք Ր Ո Ն Ի Կ

— Մակեդոնիսն. Սօֆիայէ Յուն-  
վար 28 թուականով կը հեռագրը-  
ուի թէ Պուլզարիոյ նախարարապետը  
Պ. Տանէֆ, քանի մը շահագրգիռ յայ-  
տարարութիւններ ըրած է ատէրու-  
թեանց միջև փոխանակուած բանակ-  
ցութեանց վրայ:

(\*) Թիւրիմացութեանց տեղի չ'տալու  
համար — ինչպէս պատահեցաւ «Փիւնիկ»ի  
մէջ Կարօ վերնագրով մէկ «Դրչի Զբօսան-  
ք»իս առթիւ, — ըսեմ որ նոյն վերնագրին  
տակ գրուած յօդուածները ո՛ր և է անձի  
չ'են ակնարկիւր անհասապէս, այլ բարքերը  
հաւաքաբար առնուած կը խտացնեն մտա-  
տիպար մը, իբրև գրչի զբօսանք:

Վ. Վ. Շ.

«Բարենորոգմանց մասին կատարուած բոլոր բանակցութեանց նպատակն է գտնել պետ մը, որ պիտի վարէ Մակեդոնիոյ վերակազմուած ու լաւուցած վարչութիւնը:

Այս վարչութիւնը պիտի մնայ Օսմանեան դերիշխանութեան աակ, բայց կերպով մը պիտի անկախ ըլլայ Սուլթանէն, քանի որ մեծ տէրութիւնները պիտի կազմեն զայն:

Եթէ յաջողինք գտնել այդ անհրաժեշտ անձնատրութիւնը, եթէ տէրութիւնները, համոզելով կամ բռնի, յաջողին Սուլթանին հաւանութիւնն ստանալ անուանելու գերադոյն, օտարազգի ու անկախ կառավարիչ մը եթէ վերջապէս, Մակեդոնացիները վստահ ըլլան որ իրենց խնդիրը լըրջօրէն ձեռք պիտի առնուի, այն ատեն միայն պիտի կարելի ըլլայ յուսալ թէ ապստամբութիւնը պիտի չը պայթի գարնան:

«Ամեն մարդ գիտէ, իրօք, Եւրոպայի մէջ, թէ այս խռովութեանց հետեանքները պիտի չը տեղափակուին լոկ Պալզաններուն մէջ:»

— 4. Պոլսէ Նոյն թուականով կը հաւաստուի թէ Սուլթանին մէկ իրասէն կը հրամայէ, Փոքր Ասիոյ մէջ ռուսերէրքական սահմանազլխին վըրայ, հաստատուիլը շատ մը հեռագրական գծերու որոնք պէտք է կապուին երկրին ներսը հաստատուած կեդրոնական կայարաններու հետ:

Նոյն իրատէն Սկիւտարիի վալի Շաքիր բաչայի կը հրամայէ Սն Լեռի սահմանազլխին երկայնքը ձեռք առնել ճիշդ թուրքերէսերպ սահմանազլխին վըրայ ձեռք առնուած միջոցներուն նման միջոցներ:

— Մակեդոնական Գոնիթիին պետը Պօրիս Սարաֆօֆ յայտարարեց թէ գարնան ընդհ. ապստամբութեան համար կազմ ու պատրաստ են Մակեդոնիոյ յեղափոխական ուժերը: Պաշտօ-

նապէս կոչուած ըրաւ բոլոր մասնաճիւղերուն ապստամբական ո՛ր և է շարժում չը գործադրել մինչև Ապրիլի սկիզբը: Հիմայ, Մակեդոնիոյ մէջ կայ 61 հրոսախուժք, որոնց թիւը կ'աճի օրէ օր:

— Գուռը պաշտօնապէս գիմեց բոլոր մեծ տէրութեանց, ծանօցանելով թէ Մակեդոնական զօմիթէն գարնան ընդհ. ապստամբութեան համար պատրաստութիւն կը տեսնէ ի Պուլկարիա: Կը վախճուի թէ Պալզաններուն մէջ բռնկուց կայծը հրդեհի չը վերածուի ու չը տարածուի ըովանդակ Եւրոպային մէջ:

— Մարոֆի Սուրբանին բանակը վերջերս շախմատեց ապստամբներուն գնդերը: Գահին թեկնածուն յաջողած է փախչիլ: Յոյս կայ թէ Մարոքի մէջ կարգը վերահաստատուի և հարկ չը մնայ եւրոպական միջամտութեան մը: Մակեդոնիոյ կացութիւնն է որ աւելի կը զբաղեցնէ գիւանապիտական աշխարհը:

— Հարիւրաճեակ մը. Ռուս մամուլին Բ. Հարիւրամեակի տօներն արգիլուեցան, որովհետև գրագէտները մերժեցին ստորագրել կառավարութեան պայմանները, որոնք չէին արտօներ ո՛չ ճառեր, ո՛չ բաժակներ: Բոլոր Մամուլը, Յոսեփեանին Գօմիթէն, նպատակից Արկղը, հրատարեցան ամեն տօնէ ու լուրթեամբ բողոքեցին:

Պաշտօնական աշխարհը միայն տօնեց Յունվարի 16ին, Սինդական Տպարանին մէջ, ռուս մամուլին Բ. Հարիւրամեակը...: Բոլոր մամուլը, առանց բայառութեան, փայլեցաւ իր բացակայութեամբ: Ո՛չ մի լրագրագետ մասնակցեցաւ:

— Թրակսական խորհրդարանին մէջ արաքին քաղաքականութեան վրայ վիճաբանութեան միջոցին, Պ. Բլէտանսէ հարցապնդում մը պիտի ընէ Հայկ. Հարցին նկատմամբ:

— Չիկնու մէջ Ընդհ. ապստամբու-  
թիւն մը կը սարքուի մաւթին մէջ:  
Տուգանքին համար վերջերս գրուած  
տուրքերը խնստ ծանր դանկելով՝ գրե-  
թէ ամեն նահանգներու բնակիչները  
կատաղած են: Ահա ելի, ընդարձակ ու  
խորհրդաւոր դաւադրութիւն մը կայ.  
նախ պիտի սպաննուին կայսրն ու  
խնամակալ կայսրուհին, յետոյ բոլոր  
պաշտօնատարները:

Այնքան զղուած են հիմակուան  
արքայական Տունէն, որ աւելի պիտի  
նախընտրեն Օտար տիրապետութեան  
մը հզատակութիւնը:

— Եանկուայի խաղական նամա-  
կատան կառքը յարձակում կրած է  
Սկիւտարիի վալի Օսման բաշայէն:  
Արժէքաւոր առարկաներուն չեն դը-  
պած, բայց բոլոր թղթերն առած  
տարած են: Օսման բաշան ուզերէ այս  
կերպով ձեռք ձգել արտասահմանի,  
մասաւորապէս Իտալիոյ յեղափոխու-  
կան գոմիթէներուն հետ յարաբերու-  
թիւն ընող Ալբանացիներուն անուն-  
ները: Յարձակումը տեղի ունեցած է  
հանրային ճամբուն վրայ, Սանդա  
Քուարանդա ու Եանկու քաղաքնե-  
րուն միջև:

— Մըչուալ Լայքի, նաև Աա-  
խըն ու Միւնիխ հրդեհի ապահովա-  
գրական ընկերութեանց եղիպտական  
ընդհ. փոխ-գործակալութիւնը յանձ-  
նուած է Տիար Յակովբ Օջանեանի և  
ընկերութեան:

Այս անուանումը հաճոյքով կը  
նշանակենք մանաւանդ անոր համար  
որ իրեն հետ պիտի ընկերակից ունե-  
նայ ամենուս համակրելի փաստաբան  
Տիար Վահան Մալէզեանը, որդի Տօգ-  
թօր Ծ. Մալէզեանի, արդէն ծանօթ  
իր լաւագոյն Ապահովագրողի հանգա-  
ման քովն ի թուրքիս:

Ապահովագրական ա'յսքան կա-  
րելոր ընկերութեանց փոխ-գործակա-  
լութիւնը վարող յիշեալ երկու երի-

տասարդներուն յայտնելով մեր խըն-  
դակցութիւնները, յաջողութիւն կը  
մաղթենք ու յարասեռութիւն:

— Քառասնա լեւակ մը — Բարեգի  
բուժնական դաղթականութիւնը, պան-  
դրխսոց խուճքին նախաձեռնութեամ-  
բը, աշխարհագրական սրահին մէջ,  
անցած Յունվարի 24ին կատարեց 1863ի  
ապստամբութեան տարեգալձը: Քա-  
ռասուն տարիներ սահեցան, ազգի մը  
դէպի անկախութիւնը սոյն վերջին ճի-  
գէն ի վեր: 1863ի ապստամբներէն  
շատերը դեռ ողջ են. ահա՛ թէ ինչո՛ւ  
Բոլոնրան ուզեց ամեն տեղ հաշակել  
այս քառասնամեակը, որովհետև ա-  
նոնք որ հիմայ դեռ ողջ են, պիտի չը  
մնան թերևս մինչև յիսնամեակը:

Չեթունի Մեծ Պատերազմին —  
Ազիզ բաշայինը — քառասնամեակը  
լրացած էր 1902 Օգոստոսի 2ին, բայց,  
գոնէ Արտասահմանի մէջ, ս'վ արդ-  
եօք փորձեց կազմակերպել տարեգալձ  
մը...:

— Հրեական հարցը լուծելու հա-  
մար հետեւեալ միջոցները կ'առաջարկէ  
Տէօյս Վոյսպրադ, ասորիական հա-  
կասեմական կուսակցութեան պաշտօ-  
նական բերանը:

1. Հիւնէյ Խաչադա'յսն Այկիա-  
նու հեռաւոր կղզիի մը մէջ հրեական  
պէտքերն մը.
  2. Հոն ճախել թոյլտրակ աշ-  
խարհիք թոյր հրեաները.
  3. Մահումէ դասապարսէյ ւ լեւ  
հրեայ որ կղզիէն պիտի վերադա-  
նայ.
  4. Կղզին մեկնող ւ լեւ հրեայի  
սասցումսք պիտի գրառի պէտքե-  
նէն, ուր բնակած է ինք:
  5. Կղզիէն հրեաներուն ու աշ-  
խարհի մասցորդ մասերուն միջեւ ւ-  
մեն առեւտր արգիլել:
- Գ.Ս.Ն.Ս.Ս.Յի տախտակները վեր-  
ջերս Սուլթանին զրկեցին հետեւեալ ա-  
զերսագիրը:

«Վեհափա՛ն. Ձեր բարութեան կոչում ընելէ առաջ՝ կ'ուզենք ձեզի քանի մը բառեր ըսել մեզի նկատմամբ: 1898-1899 տարին, 7000 քիով, Ռուսիայէն եկանք Գանասա, որ իմացած էինք թէ կրօնային ազատութեան երկիր մ'էր. բայց քիւրիստոստիան մը եղած է. իրա՛ւ, Գանասայի մէջ աստիճան մ'ազատութիւն կայ, բայց մեր փնտրածը չէ՛:»

«Մենք կը հաւատանք թէ Աստուած կը վարէ աշխարհը եւ իր պատերազմներէն զոտ օրէնք չ'ենք ընդունիր: Անա՛ թէ ինչո՛ւ չ'ենք ուզեր հպատակիլ ո եւ է կառավարութեան օրէնքներուն ու դրութեանց, ըլլալով ամենքս Աստուծոյ հպատակ եւ մեր Վեհապետին հաւատարիմ:»

«Թէ մեզ պիտի բուխին որ Գանասայի մէջ ապրինք մեր հաւատքին համաձայն, պարտաւ ելաւ այդ յոյսը: մեզ՝ ազատ ձգեցին զինուորական ծառայութենէն, քանի որ մեզի արգիլուած է զէնք կրել ու ընկերի կեանքին դէմ դառել, բայց ուրիշ ամեն բանի մէջ կ'աշխատուինք մեզ ընել անգլիական եւ ոչ թէ Աստուծոյ հպատակներ: Չ'ուզուիր մեզի հողեր տալ եթէ չը հնազանդինք Գանասային օրէնքներուն ու կանոններուն:»

«Մենք առաջի Աստուծոյ երդում կընենք որ ասիկայ մեզի համար անկարելի է եւ թէ մենք պատրաստ ենք կրել ամեն սանցանք քան թէ ուրանալ մեր Տէրը:»

«Ու հիմայ կը դիմենք ձեր բարութեան՝ աղաչելու համար ձեզ ոչ միայն իբրեւ ինքնակալի, այլ մանաւանդ իբրեւ մարդու մը, զքալ մեր ընտանեաց ու՛ զաւակներուն: Իբր Աստուծոյ քափառաւորներն այս երկրի վրայ, ձեռնէ կը խնդրենք լոկ ապաստան մը ձեր մեծ կայսրութեան մէջ:»

«Մենք ձեռնէ կը խնդրենք լոկ երկրի անկիւն մը, հոն մեր ձեռքերով աշ-

խատելու համար, առանց ենթարկուելու մարդկային օրէնքներուն հնազանդութեան եւ Աստուծմէ զոտ ուրիշի մը հպատակներ ըլլալու հարկին:»

«Ա՛ս ալ ըսենք որ մենք չ'ենք ուսեր ո՛չ միս, ո՛չ կաթ, ո՛չ հաւկիթ, ու մեր սնունդը կը բաղկանայ միայն ընդդէմընէն ու մրգեղէններէ: Ազատութիւնը թողով ամեն ապրողի, մեզի անկարելի է վնասել ո՛չ միայն մարդիկներուն, այլ եւ կենդանիներուն. ոչ մի արջառ կը պահենք մեր քով ծառայութեան ու մեր սեփական ձեռքերը կ'արտադրեն մեր բոլոր գործերը:»

«Ասոր համար ձեզ կ'աղաչենք նորէն որ մեզի շնորհէք գետին մը, որ մրցակելի ըլլայ առանց ընտանի կենդանեաց եւ գոր մենք դաւեստու եւ պարտէզներու պիտի վերածենք մեր ապրուստին համար:»

Կը խնդրենք Աստուծմէ ձեր արտի մէջ կաթեցնել մեզի համար բարութիւն ու զինք վկայ կը բռնենք որ մեր այս աղերսագիրը չէ ներհնուած շահէ, այլ իրեն հաւատարիմ մնալու մեր փափագէն:»

— *Օրմանեան Պատրիարքին վրայ դեռ ստույգ, որոշ տեղեկութիւն մը չ'առնուեցաւ. Իսկ Խաչիկեանը կ'ըսուի թէ ծեծի տանջանքի տակ մեռեր է բանտին մէջ:*

— *Իսահակ Ժամնարեանցի սպանութեան գոյժը սուգով համակած է Մարաշի բնակչութիւնը, որոնց 200 թիւով սրբերը կը խնամուին ու կը դաստիարակուին ողբացեալ բարերարին ծախքովը:*

Մատթէոս Պայլօզեանի ու Իսասակ Ժամհարեանցի սպանութեանց, ինչպէս նաև Օրմանեան Պատրիարքին սպանման փորձին առիթներովը պիտի յաջորդ թիւով ընդարձակօրէն գրենք մեր տետրութիւնները:»

Ա. այժմ, Եգիպտոսայ գաղթականութիւնն իր անկեղծ ու խորին ց չ -



**ԱՐԱՒՍ**

Հայկական տպարանը թէ՛  
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և  
թէ՛ արիշ լեզուներով ամեն  
տեսակ տպագրական գործեր  
կը կատարէ մեծ խնամով եւ,  
ինչ որ նուազ կարեւոր չէ:  
**ԽԻՍ ՉԱՓԱԽՈՐ ԳԻՆՆԵՐՈՎ,**

**ԱԶԿԵՐ**

**ԲԱՐԻՉԻ ՀԱՅՆԵՐՈՒՆ**

**ՀԱՄԱՐ**

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ, ուր կը պատ-  
րաստուին զանազան արեւելեան կերա-  
կուրներ, խիստ չափաւոր գիներով:  
Նորեկ ու անցյալ ճամբորդներու կը  
հայթայթուի ամեն կերպ դիւրութիւն:

9. R. Buffault, 9.

près Faubourg Montmartre, Paris

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ**

Մէնչիյէյի հրատարակը, Բուսաժ  
Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 խա-  
նութիւն:

Ամեն տեսակ արեւելեան կերա-  
կուրներ, և անուշեղէններ, մուսնաւո-  
րաբար ճեօնէր եւ Շիշֆէպապի:

Այս ճաշարանի վարիչներն են  
Տեարք Կարապետ Տերէմէեան  
և Սարգիս Հիւսէյինճեան:

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիացի  
է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգ-  
լերէնի, առնելու մէջ ալ, խիստ զսպասու-  
ցիչ եւ դիւրամտոյնի պայմաններով:

Փափագող՝ կըրը գինն ֆիւնիկի խմբա-  
դրութեան:

**ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ**

Անգլիերէն հայկապ երկին կա-  
րևոր մասերուն ամփոփուածը, հայերէնի  
թարգմանուած, գեղեցիկ հատար մը,  
157 էջերով, հեղինակին պատկերով  
ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Գ.  
Տօնապետեան: Դիմն է 3 Փրանկ:

Դիմել:

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London.W.

**ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ**

Ա. Արիկեան վկայեալ բժիշկի

Սէսօսրիս փողոց թիւ 1

«Ճար ս'Աշէֆսանսրի»ի սպարանիս

վրայի Ա. յարկը

Տօղթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան  
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-  
դոյ հասալակութեան թէ՛ ինք հաս-  
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ  
ու պատրաստ է դարմանելու ընդհա-  
նուր հիւանդութիւններ: Մասնագի-  
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-  
ծուած ու նորագոյն բժշկական փոր-  
ձերով ու սխաղէ լալ կը բուժէ ճանա-  
ւանդ արեան վերաբերեալ զանազան  
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր  
կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չո-  
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան  
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-  
րեն դիմող ազքատ հիւանդները: